ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2021 թվականի №----Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի №489Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀՈՍԱՆՔԱԶՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ, ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԼԱՐՄԱՆ ՇԵՂՄԱՆ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ ԲԱԶԻՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №180Ն որոշմամբ հաստատված կարգը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի №489Ա որոշման 2-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի №Ե-637-21 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №489Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 1-ին կետում «№№1-5» թվերը փոխարինել «№№1-6» թվերով.

2) Որոշման №№1-5 հավելվածների 2021 թվականի հատվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման №№1-5 հավելվածների.
3) Որոշումը լրացնել նոր բովանդակությամբ №6 հավելվածով՝ համաձայն սույն որոշման №6 հավելվածի.
4) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2) սույն որոշման №5 հավելվածով նախատեսված ներդրումների փաստացի իրականացված և շահագործման հանձնված ծավալները սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում կներառվեն №1 հավելվածի 7-րդ կետով և №2 հավելվածով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ իրականացվելուց և շահագործման հանձնվելուց հետո.».
5) Որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 և 2.2 ենթակետերով.
«2.1) սույն որոշման №1 հավելվածի 1-6-րդ և 8-րդ կետերով նախատեսված աշխատանքները մասնակի իրականացված լինելու պարագայում №4 հավելվածով նախատեսված ներդրումների փաստացի իրականացված և շահագործման հանձնված ծավալները սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում կներառվեն №1 հավելվածի 1-6-րդ և 8-րդ կետերով նախատեսված և փաստացի իրականացված ու շահագործման հանձնված աշխատանքների տոկոսային համամասնությամբ.
2.2) սույն կետի 2.1 ենթակետով սահմանված կարգավորումը կիրառվում է, եթե նույն կետով նախատեսված տոկոսային համամասնությունը գերազանցում է հինգ տոկոսը՝ կիրառելով այդ համամասնության ամբողջ չափը.»:

2. Սահմանել բաժանորդների հոսանքազրկումների միջին տևողության և հաճախության ու թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին տևողության և հաճախության բազիսային ցուցանիշները՝ համաձայն սույն որոշման №7 հավելվածի:

3. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագրի 2022 թվականի հատվածում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում մինչև 2022 թվականի փետրվարի 1-ը դիմում ներկայացնել (համապատասխան հիմնավորումներով) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- նոյեմբերի 2021թ.